


11. 236.

1929

3
2-69



1659

25 SEP. 2006

Ա. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

«ՄԵԹՈԴԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՄԲ» 90084

09 DEC 2006

Պրոֆ. Ս. ՉՅՈՒԲԻՆՍԿԻ

Թարգմ. Հ. ԺԱՄԿՈՉՅԱՆԻ
և Ս. ՏԵՐ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Ленинградского
СССР

ԱՌՍՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

ՀԱՍԱՐԱԿԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Յ Ե Վ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՌՍՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Բազու—1929—Баку

—Наркомпрос АССР.— Главсоцвос—
„Заочные Методические курсы“ на арм. яз.

3
2-69

3
9-69

3000
300 00

АСТОМ
АСТОН
АСТОМ
АСТОМ
АСТОМ

ОТ ПЕЧАТАНО
в типогр. «АЗГИЗА»
Б.-Морская, угол
Кр.-Пресненской, №16
Баку.

Ca M
429

1950.03.01

ИНСТИТУТ
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակագիտության մեթոդիկան, կազմված 1 աստիճանի ուսուցչի համար, պիտի լուծի յերկու խնդիր. առաջին՝ պարզաբանել դպրոցական հասարակագիտության բովանդակությունը կապված հասարակա-քաղաքական դաստիարակության ընդհանուր խնդիրների հետ և յերկրորդ՝ ուսուցչին ցույց տալ այն յեղանակներն ու ձևերը, վորոնց միջոցով հնարավոր կը լինի ավելի մեծ հաջողությամբ կատարել հասարակագիտական աշխատանքները: Հենց դրանով ել բնորոշվում ե մեթոդական ձեռնարկի բնույթը: Ընդհանուր խնդիրները լուծելուն առընթեր, նա տալու յե մեթոդական-գործնական ցուցմունքներ:

Մեթոդիկայի հաղորդագրական այս դասընթացը տրվելու յե հետևյալ ծրագրով.

1. Առաջին դասը նվիրված կը լինի առաջին աստիճանի խորհրդային դպրոցի հասարակա-քաղաքական խնդիրների լուսաբանությանը և այն միջոցներին, վորոնց ոգնությամբ հիշված հարցերը պիտի իրագործվեն (մանկական կոմունիստական շարժում, դպրոցական ինքնակազմակերպություն և այլն):

2. Յերկրորդ դասը նվիրված կը լինի Ադրբեջանի դպրոցներում անցնելիք հասարակագիտության ծրագրի մշակմանը՝ հագեցրած տեղական գավառագիտական նյութերով: Այս դեպքում պարզաբանված կը լինի, թե ուսուցման յուրաքանչյուր տարում գավառագիտական տարրերն ի՞նչ ձևերով պիտի հյուսվեն հասարակագիտական աշխատանքների հետ:

3. Յերրորդ դասում կը տրվի հասարակագիտական ունակությունների և գիտելիքների ծավալի մանրամասն վերլուծությունը՝ ըստ ուսուցման տարիների (Ադրբեջանի առաջին աստիճանի կոմպլեքսային ծրագրերի վրա հիմնված): Այսպիսով ընդգծված կը լինի վոչ միայն հասարակագիտության ընդհանուր բովանդակությունը՝ կապված հասարակա-քաղաքական դաստիարակության խնդիրների հետ, այլ և շեշտված կը լինեն Ադրբեջանի դպրոցների առանձնահատուկ աշխատանքներն՝ ըստ ուսուցման տարիների:

4. Չորրորդ, հինգերորդ և վեցերորդ դասերը նվիրված կը լինեն հասարակագիտական թեմաների մեթոդական մշակմանը: Նկատի առնելով, վոր բոլոր հինգ խմբակների նյութը միանգամից մշակելն հնարավոր չէ, առաջին հերթին կը արվեն բարձր յերեք խմբի հասարակագիտական նյութերը, վորովհետև այդ խմբերում արդեն բարդանում է հասարակագիտությունը:

5. Յոթերորդ դասում կը արվի առաջին աստիճանի դպրոցի հասարակագիտության աշխատանքի հիմնական մեթոդների բնութագրությունը, դրա հետ միասին՝ աշխատանքի պլանավորման համար անհրաժեշտ ցուցմունքները:

6. Ութերորդ դասը կը լուսաբանի հասարակագիտության եքսկուրսիոն փորձի աշխատանքը:

7. Իններորդ դասում կը բացատրվի հասարակագիտության հետ կապված աշակերտների ինքնուրույն աշխատանքների տեսականն ու գործնականը:

8. Տաս և տասնամեկերորդ դասերը նվիրված կլինեն ուսուցչի կենդանի խոսքին և լրագրային աշխատանքներին:

9. Տասնեկերորդերորդ դասում կը ձևակերպվեն հասարակագիտական աշխատանքների հաշվառման ձևերը:

50434-ա



36067-66

ԱՌԱՋԻՆ ԳԱՍԻ ՊԼԱՆԸ

Առաջին դասը լուսաբանում է հասարակա-հաղափարական դաստիարակության հիմնական մոմենտները:

Դասի ներածության մեջ կապ է վերականգնվում հասարակագիտության և հասարակա-քաղաքական դաստիարակության միջև: Հետո շարահյուսվում են հասարակա-քաղաքական դաստիարակության հիմնական մոմենտների բովանդակությունը և դպրոցի հասարակական պրակտիկայի ձևվերը: Այսպես լուսաբանված են՝ հակալրոնական և ինտերնացիոնալ դաստիարակության խնդիրները, յերկրի պաշտպանություն, պետական փոխառություն ազդեցության և խոցելիների վերնորոնության աշխատանքներին յերեխաներին մասնակից անելու հարցերը: հետո վերլուծված են հեղափոխական տոներն ու նշանակալից ուրերն անցկացնելու մեթոդները: Այնուհետև պարզաբանվում է դպրոցի հասարակական պրակտիկայի կազմակերպման մանկավարժական նպատակահարմարությունը, ապա շարահյուսվում են մանկական կոմունիստական շարժման խնդիրները, նաև մանրամասն լուսաբանվում են մանկական կոլեկտիվի և դպրոցական ինքնակազմակերպության ձևերի հարցերը: Այդպիսով, առաջին դասի պլանը ընդգրկում է առաջին աստիճանի խորհրդային դպրոցի հասարակա-քաղաքական դաստիարակության հիմնական բովանդակությունը:

ԻՆՉԱԿԱՆ ԱՊԱՏԱՍՏԵԼ ԱՌԱՋԻՆ ԴԱՍՐ

(Առաջադրություն)

Նախորդ ծանոթանալով ամբողջ դասի պլանի հետ, կարդացեք առաջին դասի ներածությունը: Ապա ուշադրությամբ կարդացեք §§ 1, 2, 3, 4, և 5: Յուրաքանչյուր §-ը կարդալուց հետո առանձին թերթիկների վրա նշանակեցեք քաղվածքներ կամ ձեր ըմբռնումների արձանագրությունն՝ համառոտակի:

Վերոհիշյալ §§-ների բովանդակության հետ ծանոթանալուց հետո, ստուգեցեք ձեր գրածները և թեզիսների ձևով կազմեցեք մի փոքրիկ շարադրություն՝ հետևյալ թեմայի մասին. «Աղբբեջանի դպրոցների հասարակա-քաղաքական դաստիարակության խնդիրները»:

Դրանից հետո կարդացեք հետևյալ հատվածներն այս կարգով. նախ՝ մանկական կոլեկտիվի մասին և նշանակեցեք այն հարցերը, վորոնք ծագել են կարդալու ընթացքում, ապա ուշադրությամբ կարդացեք դպրոցական ինքնակազմակերպության ձևերի մասին:

Վերջում շարադրեցեք փոքրիկ յեղրափակում՝ «Իմ դպրոցում ի՞նչպես կազմակերպել ինքնավարությունը» նյութի շուրջը:

Ով կարող է, թող հրավիրի մոտակա դպրոցների ուսուցիչների ժողով և գեկուցի այն մասին, թե ի՞նչպես կազմակերպել մեր առաջի աստիճանի

դպրոցներում յերեխաների հասարակական աշխատանքների պրակտիկան: Զեկուցման համար նախորդ պատրաստեցեք թեղիսներ և աւանձին թերթիկների վրա քաղվածքներ (ցիտատ) այս դասին հատկացրված նյութից: Յեթե նյութի մշակման ընթացքում դժվարութիւններ կանդիպեք, դիմեցեք դասընթացների վարչութիւն: Ձեր հարցերը ձեռնարկեցեք, վորքան կարելի յե, պարզ ու վորոշ:

Հասարակա-ֆաղափական դաստիարակութեան խնդիրները յեվ հասարակագիտութիւնն Ադրբեյջանի առաջին ասիւնանի դպրոցներում:

Ներածութիւն.— Հասարակագիտութեան վրա խորհրդային դպրոցում վոչ մի դեպքում չի կարելի նայել սոսկ վորպես ուսուցման առարկայի: Դպրոցական հասարակագիտութեան մեջ որդանապես ձուլված են ուսուցման և դաստիարակութեան տարրերը: Մանավանդ այժմ, յերբ խորհրդային դպրոցի առաջ սուր կերպով դրված է նոր մարդ դաստիարակելու խնդիրը, անհրաժեշտ է ընդգծել հասարակագիտական աշխատանքների դաստիարակչական նշանակութիւնը:

Հասարակագիտութեան միջոցով շատ ավելի հեշտ է մեր սաների մեջ մշակել մարքսիստական—լենինյան աշխարհայացքը և պատրաստել նրանց սոցիալիստական շինարարութեան մասնակցելու համար:

Դրա համար անհրաժեշտ է տալ նրանց հասարակական գիտելիքների և ունակութիւնների վորոշ պաշար: Այդ գիտելիքների և ունակութիւնների համադրութիւնը, վոր կատարվում է դպրոցի կողմից կոմունիստական վոգով, կտա ապագա ակտիվ հասարակական այն մարդը, վոր կառուցելու յե սոցիալիստական հասարակութիւնը: Կոմյերիտմիութեան յերրորդ համագումարում Լենինն այսպես է ասել նոր յերիտասարդ սերնդի մասին. «Այն սերունդը, վոր այժմ տասն և հինգ տարեկան է, նա կտեսնի կոմունիստական հասարակութիւնը և ինքը կկառուցի այդ հասարակութիւնը: Յեվ նա պիտի իմանա, վոր իր կյանքի ամբողջ խնդիրը հենց այդ հասարակութիւնը կառուցելու մեջ է»:

Այստեղից միանգամայն պարզ կերպով հասկանալի յե, վոր խորհրդային դպրոցն իր սաներին այնպես պիտի դաստիարակի, վոր նրանք լինեն պատրաստ և կարողանան կառուցել նոր հասարակութիւնը:

Հասարակագիտական աշխատանքների բովանդակութիւնն ու մեթոդները պիտի միանգամայն համապատասխան լինեն հասարակա-քաղաքական դաստիարակութեան ընդհանուր խնդիրներին:

1. Հակակրոնական դաստիարակութիւն.

Հասարակա-քաղաքական դաստիարակութեան անբաժան մասն է կազմում հակակրոնական դաստիարակութիւնը: Մինչև վերջին ժամանակներս հակակրոնական դաստիարակութեան խնդրի վերաբերյալ գոյութիւն ունեցին զանազան տեսակետներ: Վոմանք կարծում էին, թե դպրոցը կոմյերիտմիութեան հետ միասին պիտի մղի հակակրոնական ակտիվ պրոպագանդա: Այդ նպատակով առաջարկվում էր կազմակերպել հակակրոնական զանազան կամպանիաներ, բայց հաճախ այդպիսի պրոպագանդան մեթոդական տեսակետից անշոք կերպով էր տարվում և առաջ էր բերվում հա-

սարակութեան կողմից դժգոհութիւն և թշնամանք: Բացի դրանից՝ պրոպագանդան չէր հիմնավորվում գիտականորեն և տալիս էր զուտ արտաքին եֆֆեկտ: Ուրիշներն, այդ պատճառով, մանկավարժորեն ավելի նպատակահարմար էին համարում հրաժարվել հակակրոնական կամպանիայի մեթոդից և անցնել տեղական անկրոն դաստիարակութեան յեղանակին:

Այդ տեսակետի կողմնակիցները հենվում էին այն հանգամանքի վրա, վոր առաջին աստիճանի դպրոցի հիմքում դրված է մատերիալիստական աշխարհայացք ստեղծելու սկզբունքը և այդպիսով յերեխաներն աճելու և զարգանալու յեն կրոնի ազդեցութիւնից հեռու: Նրանք ասում էին. «Յերեխաները դաստիարակվելու յեն մատերիալիստական վոգով և նրանց գիտակցութեան մեջ կրոնը տեղ չի ունենալու»: Բայց այս տեսակետի մեջ կատարված է մի լուրջ սխալ: Բանն այն է, վոր անկրոն դաստիարակութիւնն հնարավոր կլինի այն դեպքում, յեթե դպրոցը միջավայրի կողմից դիմադրութեան չը հանդիպի: Մակայն դասակարգային պայքարը գյուղում և քաղաքում սրվելու դեպքում կրոնն հանդիսանում է ռեակցիոն ուժեղ միջոց: Զանազան դավանանքների հոգևորականութիւնը, լինի դա ուղղափառ թե աղանդավոր, կամ մահմեդական թե հրեական, մեր որերում յերևան է բերում անսովոր ակտիվութիւն: Ուղղափառ հոգևորականութիւնը զանազան միջոցներով յերեխաներին քաշում է դեպի պաշտամունքի ծիսակատարութիւնները, յերեխաները յեկեղեցում կատարում են «հասարակական յուրատեսակ պարտականութիւններ»: Նրանք տուփերով հավատացյալ ժողովրդից հավաքում են նվիրատւութիւններ՝ յեկեղեցու նորոգութեան համար: Իսկ աղանդավորներն ընտրում են ավելի նուրբ ձևեր և միջոցներ. նրանք պայքար են մղում խմելու և ծխելու դեմ, վերացնում են անգրագիտութիւնն հավատացյալների մեջ և այլն. հենց այդ տեսակի գործունեութիւնն էլ նրանց հնարավորութիւն է տալիս քարոզել աստծու խոսքը:

Ադրբեյջանում և Թաթարիստանում մոլլաներն հաճախ կազմակերպում են կրոնական դպրոցներ և այնտեղ գրավում անգիտակից ծնողների յերեխաներին: Բոլոր նշանները ցույց են տալիս, վոր կրոնը և նրա սպասարկողները անցնում են հարձակման, պայքարը մղվում է յերեխաներին և պատանիներին ազդելու և գրավելու նպատակով: Կարճ է արդոք դպրոցը խորհրդային իշխանութեան մատաղ սերնդի համար մղվող պայքարում չեզոք մնալ: Յուրաքանչյուր ուսուցիչ, վորտեղ էլ նա աշխատելիս լինի, թիւրքմենիստանի խուլ անկյունում, թե Ադրբեյջանի կենտրոնում, պիտի վճռականապես ասի. «վոչ, դպրոցը չի կարող չեզոք մնալ»:

Դպրոցը պիտի անցնի հարձակման կրոնի վրա, վոր խանգարում է խորհրդային պատանեկութեան առողջ և կուլտուրական դաստիարակութեան գործին: Բայց անցնել հարձակման չի նշանակում գործածել ճոճաւան ֆրազներ: Անհրաժեշտ է դպրոցի ամբողջ աշխատանքները, մանավանդ հասարակագիտութիւնն ու բնագիտութիւնը, հագեցնել հակակրոնական տարրերով: Ուսման առաջին իսկ տարուց պիտի է գործադրել մանկավարժական բոլոր հնարավորութիւնները հակակրոնական դաստիարակութեան հիմք դնելու համար:

Կոմպլեքսային նյութերի կամ առարկաների պլանավորման ժամանակ պետք է նախատեսել թե վորտեղ, վոր նյութի մեջ և ինչ ձևով կարելի յե տանել հակակրոնական աշխատանք:

Եյականն այն է, վոր այդ աշխատանքը լինի տեական և վոչ թե պատահական կամ առանձին մոմենտներէ հետ կապված: Հակակրօնական աշխատանքը կը վերածվի ակտիվ հակակրօնական դաստիարակութեան միայն այն դեպքում, յերբ նա մշտական է և կապված է ամբողջ մանկավարժական պրոցեսի հետ:

2. Ինտեքնացիոնալ դաստիարակություն.

Կրօնի հետ միասին խորհրդային դպրոցի վրա հարձակման է անցնում և նացիոնալիզմը: Հոկտեմբերյան հեղափոխութիւնը ցարական նախկին Ռուսաստանի ժողովրդներին ազատագրել է դարավոր ճնշումից: Այժմ, Խորհրդային Միութեան պայմաններում, յուրաքանչյուր ազգութիւն լիակատար հնարավորութիւն ունի ստեղծելու յուր անտեսութիւնն ու կուլտուրան. մենք արդեն այժմ հանդիսատես ենք Ադրբեջանի, Թուրքմենիստանի, Թաթարիստանի և այլ վայրերի ազգային կուլտուրայի և անտեսութեան անսովոր արագ աճմանը: Խորտակվում են դարավոր նախապաշարմունքները, խորհրդային լուսավորութիւնը թափանցում է հեռավոր մութ անկյունները: Յեւ այն ժողովրդները, վորոնք ճնշված էին ցարի ժամանակ, այժմ նրանք հաջողութեամբ և ակտիվ կերպով մասնակցում են սոցիալիստական շինարարութեանը:

Ձե վոր ամբողջ Խ. Ս. Հ. Մ.-ն իր ելութեամբ ինտերնացիոնալ պետութիւն է և նրա գորութիւնն հիմնված է աշխատավոր ժողովրդների ինքնակամ դաշինքի վրա: Նշանակում է յուրաքանչյուր դաշնակից ժողովուրդ ունի իր սեփական շահերից բացի և ընդհանուր շահեր—Խ. Ս. Հ. Մ.-ի շահերը: Ամեն մի ժողովուրդ, լինելով իրավունքներով հավասար ժողովրդների ընտանիքի մի անդամը, դաստիարակում է իր նոր հասունացող սերունդը, հանդէպ մյուս ժողովրդների, հարգանքի զգացմունքով: Հակառակ դրան, գիշարատարար, մենք նկատում ենք նացիոնալիզմի մի քանի ցավալի նշաններ, վորոնք չը պիտի լինեն Խ. Ս. Հ. Մ.-ի մեջ: Ռ. Ս. Խ. Հ.-ի դպրոցներում նկատելի չէ անտիսեմիտիզմի աճումը. գյուղացիութեան այն մասը, վոր գտնվում է գիտակցութեան ցածր աստիճանում, կամ թե խորհրդային իշխանութեան հանդէպ կատաղած բուրժուազիայի մնացորդները իրանց յերեխաներին զրգոում են հրեաների դեմ: Յերեխաները դպրոցում, իրանց խաղերի կամ փոխադարձ շփման ժամանակ, հաճախ յերեւան են բերում չը գիտակցված թշնամանք՝ դեպի հրեաները: Յեթե դպրոցը չը միջամտի, հետագայում այս թշնամանքը զարգանալով կարող է վտանգավոր մարդատեցութիւն դառնալ: Ուսուցիչը դպրոցում պիտի մղի մանկավարժորեն լավ ձևակերպված վճռական պայքար՝ անտիսեմիտիզմի բոլոր յերեւելիքների դեմ: Այդ նպատակով հարմար է յերեխաների հետ անցնել ցարական Ռուսաստանի ժամանակ հրեաների վերաբերմամբ գործադրված հալածանքի և ճնշման պատմութիւնից բնորոշ մոմենտներ: Անհրաժեշտ է ընդգծել, վոր խորհրդային իշխանութեան թշնամիները տարածում են ստեր այն մասին, թե, իբր ամենուրեք գործի զլուխ են անցած հրեաները: Պետք է ցայտուն որինակներով ցույց տալ, վոր հրեութիւնը միատարրութիւն չի ներկայացնում, վոր հրեական բուրժուազիան գտնվում է նույն դրութեան մեջ, ինչ վոր մյուս ազգութիւնների բուրժուազիան, և վոր նա նույնպէս թշնամական դիրք ունի դեպի խորհուրդները: Հրեական ժողովրդի հողագոր-

ծական աշխատանքի անցնելու և հրեական ժողովրդի չքավոր տարրերի պրոլետարիզացիայի յենթարկելու մասին խոսելը—պատմելը կտան, անշուշտ, դրական արդյունքներ և կը ստեղծեն բարեացակամ վերաբերմունք՝ դեպի իրանց ընկերները: Ոգտակար կը լինեն նաև հրեաների Ռուսաստանում մղած հեղափոխական շարժման պատմութիւնից բերել մի քանի ցայտուն և գունեղ կտորներ:

Նման յերեւելիք կարող է տեղի ունենալ նաև Ադրբեջանի թյուրքական և հայկական դպրոցներում: Վորպէսզի կարելի լինի կանխել կամ ջնջել նման հնարավոր յերեւելքը, անհրաժեշտ է դպրոցի հենց առաջին քայլերից ոգտագործել դաստիարակչական և մանկավարժական բոլոր միջոցները՝ պատմաստելով յերեխաներին հարազատութեան և ինտերնացիոնալ զգացմունքները:

Կարող է պատահել, վոր Ադրբեջանի ազատագրման պատմութիւնն ավանդի ազգային շեշտով: Յերեխաներին հաճախ պիտի հիշեցնել, վոր նրանք վոչ թե միայն թյուրքներն, այլ և Ադրբեջանի Ս. Խ. Հ. և Խ. Ս. Հ. Մ. քաղաքացիներն: Շատ լավ կը լինեն հենց առաջին աստիճանի դպրոցում հայ կամ թյուրք յերեխաներին տալ պատկերներ այն մասին, թե Ադրբեջանի ժողովրդները ինչպէս էլին ապրում ցարի ժամանակ և ինչպէս այժմ:

Կարևոր է ամեն անգամ շեշտել, վոր միայն Հոկտեմբերյան հեղափոխութիւնը կարող էր ազատագրել Ադրբեջանը և հնարավորութիւն տալ նրան բարգաւաճելու, մի հեղափոխութիւն, վորին մասնակցել են ցարական Ռուսաստանի բոլոր ճնշված ժողովրդները:

Կապը մյուս ազգութիւնների դպրոցների հետ, հեղափոխական տոնների ժամանակ փոխադարձ այցելութիւնները, հեռավոր շրջանների դպրոցների հետ գրավոր կապը, 26 Կոմմունարների կյանքի և գործունեութեան մասին հուշական ապրումներով լի պատմվածքները—այս բոլորը կարող կը լինեն զարգացնել յերեխաների մեջ այն համոզմունքը, վոր նրանք արշունակցական մոտիկութիւնով կապված են Խ. Ս. Հ. Մ.-ի մյուս ժողովրդների յերեխաների հետ: Ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր այս գործում մեծ դեր է խաղում պիտիներ շարժումը: Միևնույն խմբակում (отряд) թյուրքի, ռուսի, հրեայի, հայի, պարսիկի և այլն միասին աշխատելու հանգամանքը այն զեղեցիկ հիմքն է, վորի վրա շատ հեշտ կերպով կարելի չէ կառուցել ինտերնացիոնալ դաստիարակութիւնը:

Խորհրդային ուսուցիչը, լինի նա ռուս, թյուրք թե հայ, պիտի հիշի, վոր նա դաստիարակում է վոչ միայն իր ազգային քաղաքացուն, այլ և Խ. Ս. Հ. Մ.-ի քաղաքացուն, ապագա սոցիալիստական հասարակարգը կառուցողին: Այդ դեպքում նա կարող կը լինի հաղթահարել և հեռացնել վորոշ դեպքերում յերեւան յեկող նացիոնալիզմի ֆուստակար ազդեցութիւնը: Վերջինս ինչ ձևերով էլ յերեւան գա՛ կը հանդիսանա խորհրդային շինարարութեան թշնամին:

3. Յերկրի պաշտպանության խնդիրներ.

Առաջին աստիճանի դպրոցի հասարակա-քաղաքական դաստիարակութեան ծրագրերի մեջ տեղ պիտի բռնեն վոչ թե միայն յերկրի ներքին խնդիրները, այլ և միջազգային բնույթ կրող մի շարք հարցեր: Նման հարցեր առանձնապէս անհրաժեշտ է դնել այժմ, յերբ կապիտալիստական յեր-

կըրները ուժեղացնում են իրանց թունավոր պայքարը և բացերեաց պատ-
րաստվում են պատերազմի:

Հասարակագիտութան աշխատանքը պլանավորելիս և III, IV, V խմբ-
երի հասարակական աշխատանքների տեսակները ծրագրելիս—անհրաժեշտ
է հագեցնել նրանց բովանդակութունը մեր յերկրի միջազգային դրություն-
նը պարզաբանող խնդիրներով: Այսպես՝ որինակ, նախորոք զրույց ունե-
նալով մեր յերկրին սպառնացող պատերազմի վտանգի մասին, կարելի յե
հանգել հետևյալ յեղրակացությանը. Խ. Ս. Հ. Մ.-ը ձգտում է խաղաղու-
թյան, բայց Խ. Ս. Հ. Մ.-ի վրա կարող են հարձակվել. Խ. Ս. Հ. Մ.-ի ամեն
մի քաղաքացի պատրաստ պիտի լինի մեր յերկրի պաշտպանության համար:

Առանձնապես անհրաժեշտ է ընդգծել պատերազմի վտանգը՝ կապված
նավթարդյունաբերության խնդիրների հետ: Աղբյուրների գաղտնականների
համար այս հանգամանքն ավելի հասկանալի կը լինի: Դպրոցականներն ինչ
կարող են անել՝ յերկրի պաշտպանության գծով: Նրանք ֆիզիքապես պիտի
լինեն տոկուն, կուլտուրապես բարձր և զորավիգ կարմիր բանակի համար:
Ֆիզիկուլտուրային վարժություններին պիտի տալ հասարակա-նազմական
բնույթ: Դպրոցում, մասնավոր IV և V խմբակներում, կարելի յե կազմա-
կերպել ՈՍՈ-Ավիախիմի և Կարմիր Բանակի անկյուններ, կարելի յե սերտ
կապ հաստատել դպրոցի և կարմիր զորանոցի միջև: Ռազմական թեքումով
կազմակերպված խաղերն ու զրամատիզացիան կարող են համարվել ուղ-
մա-հուզական եներգիայի զրսեվորման ձևերը: Այդպիսով ըմբռնելով այն
հիմնական միտքը, վոր Խ. Ս. Հ. Մ.-ը ձգտում է խաղաղության, բայց նրա
վրա կարող են հարձակվել, առաջին աստիճանի դպրոցների յերեխաների
ներքին հուզական աշխարհը վարակվում է յերկրի ընդհանուր պաշտպանու-
թյան անհրաժեշտության զգացմունքով: Այս առաջադրության հաջողու-
թյունը կախված է նրանից, թե ուսուցիչն ու յերեխաները ինչ չափով կա-
րող են ներհյուսել իրենց աշխատանքների մեջ՝ գունագեղման, շարժողու-
թյան և հասարակական ոգտակարության տարրեր (կարմիր զորանոցին ոգ-
նություն, խնամք կարմիր բանակայինների յերեխաներին և այլն):

4. Պեսական փոխառություններ, խորհուրդների վերցնություններ.

Հասարակա-քաղաքական դաստիարակության նպատակով խիստ կա-
րևոր է յերեխաներին հնարավորություն տալ կատարելու հասարակական
հանձնարարություններ: Այդ տեսակետից մանկավարժորեն նպատակահար-
մար է ապահովել յերեխաների մասնակցությունը պետական փոխառու-
թյունների պրոպագանդայի և խորհուրդների վերընտրական կամպանիաների
մեջ:

Դպրոցում համապատասխան զրույց ունենալուց հետո, յերեխաները
պատրաստում են իրենց հարազատների, ծանոթների մեջ և ռայոններում—
անցկացնելիք պրոպագանդային պլանը:

Առանձին-առանձին աշակերտներին կամ խմբերին տրվելիք հանձնա-
րարությունները չպիտի լինեն բարդ և յերկարատև: Ընդհակառակը, հանձ-
նարարությունները հիմնված պիտի լինեն յերեխաների ժամանակի, ուշժե-
րի և այլ պայմանների հաշվառման վրա: Ըստինքյան հասկանալի յե, վոր
դպրոցում պիտի կազմակերպել փոխառության կոլլեկտիվ ստորագրություն:
Որոհուրդների վերընտրության մասնակցելը պիտի արտահայտվի վոչ միայն

ազգաբնակչության մեջ տարվող ագիտացիայի ձևով, այլ և վոչ բարդ աշ-
խատանքներ կատարելով: Որինակ՝ ռայոնում, ուր ազգաբնակչությունը դեռ
չի տիրապետում նոր լատինական այբուբենին կամ միանգամայն անգրա-
դետ է, աշակերտները զրույց են հրավիրատուներ, հասցնում նրանց ընտ-
րողներին և կարողում վերջիններին համար: Յերեխաների այս ձևի մասնակ-
ցությունը վերընտրական կամպանիաներին տալիս է լավ արդյունք և հա-
ջող կերպով կիրառվում թե՛ Ռ. Ս. Հ.-ում և թե՛ ծայրամասերում:

Համենայն դեպս նման հանձնարարությունների իրականացնելը յերե-
խաների մեջ վոչ միայն ամրապնդում է այն գիտակցությունը, վոր նրանք
ևս կարող են հասարակական և պետական գործերին մասնակցել, այլ և
ցանկություն է առաջ բերում հետագայում աշխատելու հասարակական աս-
պարեզում:

5. Հեղափոխական տոներ յեվ-հեռանկալից որերը.

Դպրոցն հաճախ իվուր բարդացնում է հեղափոխական տոների և նշա-
նակալից որերի կազմակերպչական աշխատանքը: Շատ վաղաժամ յերեխա-
ները կտրում են իրենց նորմալ պարապմունքները և սկսում են «պատ-
րաստվել» տոներին: Հատկապես տոնակատարության համար պատրաստում
են ներկայացումներ և զեկուցումներ, նկարում զեկորացիաներ և պլակատ-
ներ: Ամբողջ որն յերեխաներն անց են կացնում դպրոցում:

Ստացվում է այն, վոր տոներից հետո նրանք ավելի շատ են հոգնած
լինում, քան սովորական աշխատանքներից հետո: Այն ինչ՝ դպրոցական
տոնը յերեխաների համար պիտի լինի ուրախության և հանգստի որ: Հե-
ղափոխական տոնը յերեխաներին պիտի տա տոնակատարության որվա
հետ կապված ուրախ հուզական ապրումներ և նրանց պիտի համակի հեղա-
փոխական ենտուզիզմով: «Հոկտեմբերյան Հեղափոխություն» որվա հետ
յերեխաները կապված պիտի լինեն վոչ միայն ուսուցչի պատմաձևերով, այլ
և իրենց անձնական փոքրիկ ուրախություններով, վորոնց հուշերը կը ծա-
ռայեն վորպես կամուրջ դեպի Հոկտեմբերը: Ահա թե ինչու Հոկտեմբերյան
որին դպրոցը պիտի լիացնի յերեխաներին կոլլեկտիվ խաղերով, ֆիզիկու-
լտուրայով, յերգեցողությամբ, նվագածությամբ, շարժումով: Շատ լավ կը
լինի, յեթե դպրոցն այդ որը յերեխաներին բաժաներ նվերներ, բայց ան-
հրաժեշտ չէ, վոր այդ նվերները լինեն թանգարժեք և վոչ ել քաղցր, ինչ-
պես կանֆետ կամ քաղցր թխվածք: Ինչո՞ւ այդ որը յերեխաներին չը տալ
փոքրիկ, զեղեցիկ զրքույկներ՝ որվա պատշաճ մակագրություններով: Ին-
չո՞ւ այդ որը չըավոր յերեխաներին չը տալ վոտնամաններ կամ հագուս-
տեղեն: Դա թանգ չի նստել. նման նվերների համար անհրաժեշտ գումա-
րը կարող է տալ կոոպերատիվը կամ աջակց. կոմիտեն: Բայց դրա փոխա-
րեն ինչքան լավ և մեծ տպավորություն կը թողնի յերեխաների վրա՝ այդ
որը նվերներ ստանալը: Յերկար ժամանակ նրանք կը հիշեյին այդ որվա
մասին. նրանք կը կրկնեյին. «այսինչ բանը ինձ նվիրված է Հոկտեմբերին».
«այս բանը յես ստացել եմ Հոկտեմբերյան Հեղափոխության տոնի որը» և
այլն: Արդյոք դրա մեջ չկան այն թելերը, վորոնք յերեխաների տպավո-
րությունները կապում են Հոկտեմբերի նշանակության գիտակցության
հետ:

— Խորհրդային դպրոցում պետք է ստեղծել հեղափոխական տոնային *հրապարակներ*: Յերեսխաններին պիտի ոժտել այնպիսի ունակութիւններով, վոր նրանց համար սովորութիւն դառնա հեղափոխական տոնի որը հազ- նվել ավելի մաքուր և գեղեցիկ, սանրվել և այլն: Անհրաժեշտ է ստեղծել դպրոցում մանկավարժորին նպատակահարմար և քաղաքականապէս ոգտա- վետ հանդիսավորութիւն և այդ տեղափոխել ընտանիք: Դպրոցում նման ուղղութիւնով տրամադրված յերեսխաները տանը կը պահանջեն, վոր սեղա- նը ծածկված լինի մաքուր սփռոցով, այդ որվա ճաշը պատրաստված լինի ավելի լավ, վոր ծնողները նույնպէս տոնեն և այլն: Դպրոցը պիտի առան- ձին տեղ տա տոնական այցելութիւններին, այն է՝ յերեսխաների փոխա- դարձ հաճախումներ, հասարակական կազմակերպութիւնների կողմից յերե- խաներին տոնների հրավիրել, բանակումներում մանկական տոնակատարու- թիւններ կազմակերպելը և այլն: Այդպէս տարեց տարի դպրոցը յերեսխա- ների միջոցով հին կենցաղի մեջ կը մտցնի հեղափոխական տոնների հետ միասին հեղափոխական վոգին: Յեւ այդ հին կենցաղը կը խաբւելի և չի դիմանա խորհրդային դպրոցի հառաջխաղացմանը: Յերեսխաների մեջ համա- պատասխան տրամադրութիւն պիտի ստեղծել նաև Լենինի հիշատակման և հունվարի 9-ի օրերին, 26 Կոմունարների գնդակահարման տարեդարձին և այլն: Սգալոր յերաժշտութիւն և յերգերի ազդեցութիւն տալ յերեսխանին ավելի ուշադրութիւն կը վերաբերվեն և կը լսեն Լենինի կյանքի և գոր- ծունեցութիւն, Շահումյանի և մյուսների հերոսական մահվան հետ կապված պատմվածքներն ու զրույցները: Պատմվածքները պիտի լուսաբանել գեղե- ցիկ պլակատներով, պատկերներով, մոզական լապտերով և կինո—ֆիլմերով:

Նշանակալից օրերի հետ պիտի կապել այն հաշվառումը, թե ինչպէս ենք մենք պատրաստում փոխարինողներ: «Մենք նոր կյանքի համար մղվող պայքարում ընկածներին փոխարինելու յենք գնում»։ ահա այն միտքը, վոր կարմիր թելով պիտի անցնի հեղափոխութիւն առաջնորդների և հերոսների հիշատակները կատարելու օրերում: Ուսուցչից է կախված տարեց տարի կրկնվող նշանակալից օրերը դարձնել բազմազան և բովանդակութիւնն ու ձևերին տալ վառ գույներ: Այստեղ միևնույն նյութը կրկնելու և ցուցա- դրելու վտանգ կա. այդ իսկ պատճառով, ամեն տարի անհրաժեշտ է տոնա- կատարութիւնների մեջ մտցնել նորութիւն և թարմութիւն: Յաճի խմբե- րի համար կարելի չէ բազմազան դարձնել խաղերն ու պատմվածքները, իսկ բարձր խմբերը կարող են ամեն տարի հաշվառման յենթարկել, թե ինչպէս են կատարում Լենինի պատգամները և այլն: Յեթե նշանակալից օրը կապել ընթացիկ հասարակա-քաղաքական մոմենտի հետ, այդ դեպքում վոչ միայն կրկնողութիւն չի լինի, այլ և ամեն մի տարի հեղափոխութիւնն առաջնորդի կամ հերոսի որը կատանա ավելի մեծ նշանակութիւն և կը լեցվի նորութիւնով: Այս բոլորով հանդերձ յերեսխաների մասնակցութիւնը հեղափոխական տոնների կատարման մեջ ունի դաստիարակչական չափազանց մեծ նշանակութիւն:

6. Հասարակական պրակտիկան.

Յերեսխաների հասարակական դաստիարակութիւն համար նշված վերո- հիշյալ ուղղութիւնները դպրոցին հնարավորութիւն են տալիս ուսուցման գործն օրգանապէս կապել դաստիարակութիւն հետ: Բոլորի համար այժմ

ակնբախ է, վոր խորհրդային դպրոցականը դպրոցում ձեռք է բերում վոչ միայն գիտելիքներ, այլ և գործնական վորոշ ունակութիւններ:

Խորհրդային ուսուցչի առաջ ընդհանրապէս ու հասարակութիւն դաստալի առաջ մասնավորապէս դրված է հետևյալ խնդիրը. անհապաղ կերպով կազմակերպել դպրոցում յերեսխաների հասարակական պրակտիկան: Ուսուցման հնգամյա առաջին աստիճանի դպրոցը վերջացնող սաների համար արդեն մատչելի պիտի լինեն հասարակական պարտականութիւնների կա- տարման տարբերակ ձևերը և նրանք համակված պիտի լինեն խորհրդային հասարակայնութիւն վորով: Բայց ի՞նչ ձևեր ունի հասարակական պրակտի- կան առաջին աստիճանի դպրոցում:

7. Մանկական կոմունիստական ռաժուսմը.

Կարճ ժամանակվա ընթացքում, ընդամենը 1922 թվից մինչև այժմ, մանկական կոմունիստական շարժումը Խ. Ս. Հ. Մ.-ում անսովոր թափով զարգացավ: Բավական է հիշատակել, վոր Լենինյան պատանի պիոներների կազմը վեց տարվա ընթացքում մի քանի հազարից հասավ մինչև 2.500.000-ի: Պիոներների գոյութիւն անսովոր յերեւոյթը մեզ մոտ վոչ միայն դարձավ շատ սովորական, այլ և՛ կուլտուրական և հասարակա-քաղաքական կյանքի համար մի անհրաժեշտ յերեւոյթ: Պիոներների սկզբնական վոչ մեծ խում- րը, մասսայի քաղաքական և կուլտուրական մակարդակին զուգընթաց, առ- տիճանաբար ընդգրկում է յերեսխաների ավելի մեծ շրջան՝ վերածելով իր փոքրիկ խմբակները ուժեղ կազմակերպութիւնների: Պիոներական ջոկատը ընականորեն անխզելի կապ պիտի ունենար դպրոցի հետ: Դպրոցն էլ իր հերթին կապված պիտի լիներ պիոներական ջոկատի հետ: Այդ է պահան- ջում խորհրդային իրականութիւնը և դա լիովին կը համապատասխաներ դաստիարակութիւն նպատակներին: Չէ՞ վոր դպրոցն ու մանկական շարժումն ապագա քաղաքացու վերաբերմամբ ունեն միևնույն հասարակա-քաղաքա- կան նպատակները՝ պատրաստել նրանց սոցիալիստական շինարարութիւն համար: «Մանկական շարժման առաջ կանգնած է, — ինչպէս իր ժամանակին ասում էր Թախտանովը, — առաջին աստիճանի դպրոցի առաջապահ յե- րեսխաների հասարակական կյանքի կազմակերպման, մանկատների, ինտեր- նատների խնդիրները և այլն: Մանկական շարժման ֆորպոստները դպրո- ցում իրանց շուրջը պիտի համախմբեն փոքրահասակ աշակերտների գիտա- կից տարրերը, բարեկարգեն աշակերտական ինքնակազմակերպութիւնը, ընդարձակեն յերեսխաների քաղաքական-կուլտուրական մտավոր հորիզոնը և առաջապահ մանկավարժների հետ մի ֆորմա կազմելով, կենսագործեն նոր դպրոցը, դրա հետ միասին կովեն հին սխալատիկ սխալմի դեմ: Յե- րեսխաների այդ աշխատանքը դպրոցում ունի մանկավարժական հսկայական նշանակութիւն. նա յերեսխաներին վարժեցնում է ինքնուրույնութիւն և նրանց կապում է դպրոցի հետ»:

Մ. Վ. Կրուպնինյան բոլորովին ճիշտ է շեշտել մանկական շարժման տարբերութիւնը մեր և բուրժուական յերկրներում. «Գերմանիայում կո- մունիստական մանկական խմբերը պայքար են մղում դպրոցում, պայքար ավանդամուրթի դեմ, քաղաքական և մանկավարժական բնակցիայի դեմ և նրանց պաշտպանում է կոմունիստական կուսակցութիւնը:

Այնտեղ պայքար է մղվում կառավարչական սխտեմի դեմ, դպրոցում կիրառվող քաղաքականությունը դեմ. յերեխաներն այդ պայքարը մղում են բանվոր դասակարգի ընդհանուր ֆրոնտի մի փոքրիկ շրջանակում (դպրոցում) գոյություն ունեցող կառավարական սխտեմի դեմ և իրենց ազատագրելու համար: Մեզ մոտ, խորհրդային դպրոցում, սխտեմի դեմ կռիվներ կարիք չկա, վորովհետև այն նպատակներն ու խնդիրները, վոր խորհրդային իշխանությունը դնում է դպրոցի առաջ, նույնն են, ինչ վոր մանկական շարժման նպատակներն ու խնդիրները: Ուստի խորհրդային դպրոցում խոսք կարող է լինել վոչ թե պայքարի, այլ մանկական խմբակների և դպրոցի համագործակցության մասին: Այդպիսով մեր պիոները դպրոցական խմբերում դասակարգային պայքարի հարց չի դնում: Խոսքը վոչ թե վոչ պիոներների հետ պայքարի մասին է, այլ նրանց նկատմամբ դեկավարության մասին: Փորպոստը խորհրդային դպրոցում վոչ թե գրգռում է աշակերտության մի մասը մյուսի հանդեպ, այլ ուսուցչի հետ լրակատար համաձայնությունը դեկավարում է դպրոցի հասարակական կյանքը: Պիոներական առաջնորդն ու ուսուցիչը չէ պիտի գործեն իրարից անջատ: Նրանց խնդիրներն այնպես անբաժան են իրարից, ինչպես կրթական և դաստիարակչական խնդիրները: Այդ դեպքում մանկական շարժումն կ'ընդգրկի դպրոցականների ամբողջ մասսան և իսկապես կոզնի կոմունիստական դաստիարակության գործին: Պիոներ—ջոկատների միջոցով դպրոց կը մտնի խորհրդային կյանքի կենսուրախ զարկերակը:

Մտցնել դպրոց հեղափոխական տրամադրություն, դպրոցը մոտեցնել հեղափոխական դեպքերին, հրապուրել նրան դեպի ընդհանուր կամպանիաները, կազմակերպված պիոներների կողմից, այլ կերպ ասած՝ մերձեցումը բանվոր դասակարգի ընդհանուր խնդիրներին, ահա մեկն այն խնդիրներից, վոր պիոներներն իրենց առաջ դնում են դպրոցական քաղաքականության մեջ» (Крупенина «Детское комму. движение и школа»): Միանգամայն ակներև է, վոր այդ խնդիրը կազմում է մեծ ողակն այն շղթայի, վոր, հասարակագետի համար մասնավորապես և հասարակական դաստիարակության համար ընդհանրապես, հանդիսանում է իրրև կարևոր խնդիր:

8. Մանկական կոլեկտիվ.

Յերեխաները հասարակական հիմնական ունակությունները ձեռք են բերում մանկական կազմակերպված կոլեկտիվներում և դպրոցական հասարակական կազմակերպություններում: Ինչպես պիտի լինի մանկական կոլեկտիվը և ինչ ձևեր պիտի ունենան դպրոցական ինքնակազմակերպությունները, վորպեսզի վերջիններս կարողանան իրոք սպասարկել սովորողների հասարակական քաղաքական դաստիարակության խնդիրներին: Այսպես է ասում Պիատրակը այդ մասին. «Հիմնականորեն մենք այսպես ենք դնում խնդիրը. յերեխաների ինքնակազմակերպությունը խորհրդային դպրոցում առանց մանկական կոլեկտիվի ներկայություն—մեռած գործ է: Բայց, ներքեք—կառարկեն ինձ—վոր դպրոցում չկա մանկական կոլեկտիվ: Ճիշտ է, յեթե մանկական կոլեկտիվ համարենք՝ սովորելու համար պատահական կերպով մի տեղ հավաքված յերեխաների վորև քանակ, այսինքն մի նպատակով, վոր նրանց շահերի տեսակետից կրում է միայն արտաքին բնույթ, մի խմբավորում, վոր ձևավորված չէ նրանց շահերով: Բայց

յերեխաների մի կույտը, նրանց հասարակ խմբակցությունը, պատահական հավաքությունը դեռ կոլեկտիվ չէ: Յերեխաները, ինչպես ընդհանրապես մարդիկ, կոլեկտիվ են կազմում ահ դեպքում, յերը նրանք կապվում են այս կամ այն շահերով, վոր նրանց կողմից գիտակցված և հարադատ են: Յեթե դպրոցում մենք ուզում ենք ստեղծել մանկական կոլեկտիվ, մենք պիտի հայտնաբերենք այդ տեսակի շահեր, նույնպես կարողանալ նրանց ներշնչել նոր շահեր:

Այդ հանգամանքը առաջ է բերում ուսուցողական աշխատանքը յերեխաներին մոտեցնելու պահանջ: Դպրոցական չոր ուսուցումը, ինչպես այդ կատարվում է սովորաբար, յերեխաների արտին մոտ չէ, նրանց չի գրավում, գիտություն ստանալու ներքին պահանջ առաջ չի բերում, մանավանդ յեթե այդ ուսման նպատակները յերեխաների համար մատչելի ու հասկանալի չեն: Բայց յեթե նույնիսկ կրթական աշխատանքը դրված է իր պետք յեղած բարձրության վրա, նա մանկական ամուր կոլեկտիվի համար չի կարողանա ստեղծել բավականաչափ հետաքրքրություն: Դպրոցը միայն այն դեպքում կարող է ծառայել մանկական կոլեկտիվի միաձուլման և աճման համար վորպես հիմք, յերը նա դառնա մանկական կյանքի համար կենտրոնական մի տեղ, այլ վոչ թե միայն ուսուցանելու տեղ: Մանկական կոլեկտիվի անհրաժեշտությունը բղխում է մանկական կոլեկտիվ ակտիվության և ինքնագործնեությունից վարժեցնելու հիմնական պահանջից և իրա գործնեությունից պատասխանատվության գիտակցությունից: Մանուկների կոլեկտիվը բնականաբար կյանքի կը կոչի ինքնակազմակերպություն:

Դպրոցում հաշվի պիտի առնել ինքնակազմակերպության յերկու տիպ:

Առաջին՝ յերը նա նպատակադրել է աշակցել դպրոցին և ուսուցչին, վորոնք յերեխայի շահերի համար հանդիսանում են սկզբնական արտաքին տվյալներ: Ինքնակազմակերպությունը պետք է հետապնդի դպրոցական վորոշ ռեժիմ, վոր իր մեջ ընդգրկում է դպրոցական ուսումը: Նա պիտի մշակի այնպիսի ձևեր, վորոնք հնարավորություն կտան հասակավորների կողմից մշակված պլանն իրագործելու: Այդպիսի մոտեցումով մենք հաճախ կունենանք վոչ թե մի կոլեկտիվում խմբավորված յերեխաներ, այլ ողակային խմբավորումներ, յերը հասակավորների գործունեության (Функция) մի մասը տրամադրվում է նրանց: Բախտորոշ մոմենտն այս դեպքում հանդիսանում է յերեխաներից անկախ հաստատված դպրոցական ռեժիմը, կամ ավելի ճիշտ ասած՝ ուսուցչի հարմարությունը: Ինքնակազմակերպության այս ձևը պիտի վերացնել: Նա վերջիվերջո հանգում է վոչ խորհրդային տիպի ինքնակազմակերպության:

Յերկրորդ տեսակի ինքնակազմակերպությունը աստիճանաբար զարգանում է մանկական կոլեկտիվի աճման հետ գուզնթաք՝ համաձայն յերեխաների շահերի շրջանակի ընդլայնման և կազմակերպության աճման անհրաժեշտության պահանջի: Այսպիսի տիպն ավելի հաստատուն է: Յերեխաների նոր շահերի բարգավաճման և պահանջների ընդարձակման տեսակետից նա ստեղծում է ավելի նպաստավոր պայմաններ: Ինքնակազմակերպությունն ինքը արգասավորում է յերեխաների չը արտահայտված ձգտումները: Բայց ինքնակազմակերպության այսպիսի տիպը մեր առաջ դնում է մի շարք պահանջներ: Ամենից առաջ ինքնակազմակերպության այս ձևը միանգամից չի կարող կիրառվել. նայած նրան, թե ինչպես է ծագել կազ-

մակերպութեան անհրաժեշտութիւնը, այդպէս եւ նա յերևան ե գալիս այս կամ այն գործի համար:

Մասնաշենք գալառական քաղաքի (Մոսկվայի նահանգ) մի յոթնամյա դպրոցի ուրիշակը: Դպրոցն սկսել ե աշխատել քառամյա կազմով. գրպարոցական սանիտարիա դեռ չկար, չկար նաև վորոշ կարգ ու կանոն՝ հիմնոված դպրոցի ե առողջապահութեան պահանջների վրա: Առտիճանաբար, դպրոցական աշխատանքի ընթացքում, պիոներական փոքրիկ խմբակի ազգեցութեան տակ, յերեխաների մի մասը սկսում ե դառնալ ավելի պահանջկոտ ե վերաբերվել դպրոցի առողջապահութեանը ավելի լրջորեն: Հենց այդ վերաբերմունքից ել առաջ ե գալիս սանիտարական կոմիտի, վորի գործունեութիւնը չէր սահմանափակվում միայն նեղ առողջապահական աշխատանքներով, այլ ընդհանրապես առողջապահական լուսավորութեամբ ե վորոշ գաղափարների տարածմամբ: Այդպիսով ե յերևան յեկել «Առողջապահական լրագիրը», խմբագրութիւնը ե աշխատակիցները: Առողջապահական լրագրի մեջ հետզհետե սկսեցին լույս տեսնել ե ուրիշ նյութեր, վորոնց շնորհիվ թերթը վերջիվերջո դարձավ համադպրոցական որգան. թերթի միջոցով յերևան յեկան ե ձևակերպւեցին այլ խնդիրներ, ինչպէս՝ ուսումնական աշխատանք, հասարակական գործունեութիւն ե այլն: Մի տարուց հետո ինքնակազմակերպութիւնն արդեն ուներ բավական զարգացած ձևեր ե դարձավ կայուն դպրոցական յերևույթ:

Յերկրորդ պահանջը վերաբերվում ե կրթական աշխատանքի կազմակերպութեանը ե բովանդակութեանը: Գործը պիտի դնել այնպէս, վոր կըրթական աշխատանքը յերեխաների կյանքի ե նրանց գիտակցութեան մեջ ստանա կարեւոր նշանակութիւն: Այդ դեպքում կըրթական գործը կրարձրանա ու կդառնա մանկական պահանջ ե նյութ կ'ընձեռի յերեխաների ինքնակազմակերպութեան համար:

Յերրորդ կետը վերաբերվում ե ուսուցչի դերին: Պիտի վորոշակի ասել, վոր յերեխաներն իրենք իրենց, առանց մեծերի ոգնութեան, գուցե կարող են համախմբվել, բայց չեն կարող ձևակերպել ե զարգացնել իրենց սոցիալական շահերը, այսինքն՝ լայն չափով զարգացնել ե ամրացնել ինքնակազմակերպութեան հեմքը: Այդ պատճառով մենք կարծում ենք, վոր մանկավարժը չը պետք ե մանկական կյանքից հեռու մնա ե հեռվից դիտի այն: Յեթե այսպէս լինի, ապա մենք ինչի՞ յենք պետք դպրոցում: Միայն կարգացնելու համար: Բայց, մյուս կողմից, մանկավարժը չը պիտի խառնվի մանկական կյանքի մեջ, այսինքն՝ ամբողջապես ինքն ուղղութիւն տա նրան ե իր հեղինակութեամբ ու իշխանութեամբ ճնշի յերեխաների կամքը: Հարկավոր ե գտնել միջին գիծը, վոր, մի կողմից, չը ճնշի յերեխաների ինիցիատիվան, չխանգարել նրանց կազմակերպվելու, մյուս կողմից, լինել նրանց ավագ ընկերը, կարողանալ աննկատելի կերպով ոգնել նրանց դժվար դեպքերում, միաժամանակ յերեխաների ցանկութիւնները դնել ճիշտ հունի մեջ: Ավելի կոնկրետ այս նշանակում ե՝ մտցնել հասարակական բովանդակութիւն մանկական շահերի մեջ, լայնացնել ե զարգացնել վերջիններս, թողնելով յերեխաներին իրենց արդեն յերևան յեկած շահերի համար նոր ձևեր փնտրել՝ գտնել: Միանգամայն պարզ ե, վոր մենք գերադասում ենք ինքնակազմակերպութեան յերկրորդ տիպը, վորը հիմնոված ե մանկական կոլլեկտիվի աճման վրա ե վորը հետևապէս հնարավորութիւն ե տալիս պատվաստելու

յերեխաներին՝ կոլլեկտիվ կյանքով ապրելու ե կոլլեկտիվ կերպով աշխատելու կարողութիւն: Այդ ճանապարհն ավելի դժվարին ե, անհանգիստ. նա ուսուցչից պահանջում ե ավելի մեծ լարվածութիւն, հնարամտութիւն ե յերեքն ել ռիսկ, բայց նա ավելի ճիշտ ե ու, համենայն դեպս, համապատասխանում ե մեր խորհրդային դաստիարակութեան նպատակներին:

9. Դպրոցական ինքնավարութեան ձեւերը.


Դպրոցական ինքնավարութիւնը զարգանում ե դպրոցի աճմանը զուգընթաց, այդ դեպքում ել, բնականաբար, յերևան ե գալիս նրա առանձնահատուկ ձևը, այդ դեպքում իրոք նա դառնում ե դպրոցականների համար հասարակական պրակտիկայի միջոց: Յեթե, ի հարկե, «ինքնավարութիւնը» կազմակերպվում ե միայն դպրոցից ներս դիսցիպլինա վերականգնելու կամ կարգապահութեան հետեւելու նպատակով, այն ժամանակ նման «ինքնավարութեան» դերը չափազանց չնչին ե ե նրա դաստիարակչական նշանակութիւնն հավասար ե դերոյի: Բայց ըստինքյան հասկանալի յե, վոր բոլորովին խուսափել այդ խնդիրներից. դպրոցական ինքնավարութիւնը չի կարող. քանի վոր նրանք, այսինքն դիսցիպլինան ու կարգապահութիւնը, կազմում են յերեխաների հասարակական արտահայտութիւնների շղթայի մի ողակը: Դպրոցում ամենակենսակամն այն ինքնավարութիւնն ե, վոր առաջ ե յեկել հասարակական վորեվ կենդանի յեկ անհրաժեշտ գործի յեկարգման:

Ա. Բագրեցովը, խոսելով գյուղի առաջին աստիճանի մի դպրոցի մինչ հեղափոխութիւնը գոյութիւն ունեցած ինքնավարութեան մասին, ասում ե. «Մեր խմբավորման բախտորոշ մոմենտը հանդիսացել ե դպրոցական կոոպերատիվը, վոր, վորպէս կազմակերպչական յերևույթ, վորոշ դեր ե խաղացել դպրոցի կյանքում: Նա վարժեցրեց բոլոր յերեխաներին լուրջ վերաբերվել դեպի ինքը՝ կոոպերատիվը. կոոպերատիվը նրանց ընտելացրեց վորոշ կարգ ու կանոնի. նա պատվաստեց պատասխանատվութեան ե ընկերական համերաշխութեան զգացմունք:

Յերեխաների խմբավորման համար վոչ պակաս նշանակութիւն ե ունեցել սեղանատունը՝ հասարակական գործի համար. սեղանատան ամբողջ աշխատանքներն յերեխաները վերցրել եյին իրենց ձեռքը: Յերեխաների հենց այդ փորձից աճեց դպրոցական ինքնավարութիւնը: Յերեխաները սեղանատուն կառավարելու գործում իրանց կարող զգալուն պէս, իսկույն նրանց մեջ ցանկութիւն առաջացավ այդ կարողութիւնը տեղափոխել դպրոց: Այստեղից ել մի շարք կոմիտիաների կազմակերպումը. գրադարանային, ուսումնասանտեսական ե կարգապահական:

Հետագայում բոլոր կոմիտիաները միաձուլվում ե վերածվում են մի գլխավոր կոմիտիայի, վոր ընդհանուր ժողովի հանձնաքարութեամբ ղեկավարում ե բոլոր կոմիտիաների գործերը» (А. Багрецов—«Из практики самоуправления в сельской школе.—«Народный учитель», № 9, 1924 г.)

Սա դպրոցական ինքնավարութեան նախնական ձևերից մեկն ե: Բայց այստեղ էյականն այն ե, վոր ինքնավարութիւնը՝ ծագելով կենդանի գործի շուրջը, աստիճանաբար զարգացել, ամրացել ե իրոք սպասարկել ե հասարակա-դաստիարակչական խնդիրներին: Դիսցիպլինայի ե առողջապահու-



թյան անհրաժեշտությունը գիտակցությունը բղխել է կոլեկտիվի առաջ պատասխանատվության գիտակցությունից, վոր սերտորեն կապված է հասարակական գործի կատարման կարևորության հետ:

Դպրոցական ինքնավարության փորձի մասին պատմում է և Յանկովսկայա-Բայդինայի իր «Աշխատանքի յերկու տարի» գրքում. «Յես շատ մեծ դժուրությամբ ներառված եմ այդ խմբակում ինքնավարության նախատարբերը, յերեսաների համագործակցությունը մի ամբողջության մեջ, հասարակայնության վոգու գիտակցությունը կոլեկտիվի մեջ, կոլեկտիվի բոլոր անդամների համայնական պատասխանատվության գաղափարները: Յես աշխատել եմ պարզել նրանց՝ 9 տարեկան դպրոցականներին, վոր իրանք ամբողջի մի մասնիկն են կազմում, վոր մենք բոլորս պիտի սարքավորենք մեր ընդհանուր կյանքը և հոգանք մեր խմբակի ամբողջական արժեքավորության ժախն (Янковская—Байдина. «Два года работы» 2-ое изд., «Нов. Москва»—стр. 7—8. Одна глава из этой книги перепечатана у Н. Иорданского: «От самоорганизации к самоуправлению»).

Հետագայում, խմբի կյանքի բարդանալուն զուգընթաց, բարդանում են նաև ժանկական հասարակայնության ձևերը. յերևան է գալիս նոր հասկացողություն՝ «գասկում», ընտրվում են դպրոցական կյանքի զանազան ճյուղերի համար «վարիչներ» և այլն: Մանկական հասարակական գործունեությունն յեռում է, ընդգրկելով հետզհետե աշխատանքի ավելի լայն ասպարեզ: Դրա որինակն աչքերիս առաջ է. յերբ աշակերտության ամբողջ կազմը քաշվում է ինքնավարության մեջ. յուրաքանչյուրը պարտավոր է լինել հասարակական աշխատավոր: Սրանից ել այն, վոր կազմակերպությունը մեծանում, դառնում է ծանրաշարժ և վերջիվերջո չի կարողանում յերևան բերել պետք յեղած չափով աշխատունակության կարողությունը:

Յանկովսկայա-Բայդինայի աշակերտները բոլորին հասարակական աշխատանքի մեջ գրավելու ձգտումով այնքան ելին տարված, վոր, յերբ մի քանիսին «աշխատանք չեր հասնում» (չեր ել կարող հասնել), խմբում յերեվան յեկավ «անգործների» կատեգորիան: Այդպես ել գրված է առանձին թերթիկի վրա. «Մեր անգործները՝ Ժենիա, Իրա, Նատաշա, Դավիթ, Գալիա, Զոյա»: Դրա համար ել դարմանալի չե, վոր գասկումը կազմված եր... 16 հոգուց: Այստեղ, իհարկե, մենք գործ ունենք վորոշ չափի ծանրաբեռնվածության հետ, ինքնավարության ձևի վորոշ բարդության հետ, բայց մոտեցումը զեպի նա և նրա համար առաջ քաշված խնդիրները պիտի հաշվել ճիշտ, մասնավոր, վոր նրա արդյունքներն հասարակականորեն արժեքավոր են: Պետք է արդյոք, ընդհանրապես, առաջին աստիճանի դպրոցում ստեղծել ինքնավարության բարդ ձևեր, կարծում ենք՝ վոչ. բայց և ինքնավարության ձևերն ու խնդիրներն այնքան ել շատ չը պիտի տարրականացնել, վոր մեջտեղում մնա միայն «որապահություն» և «գասարանը մաքրել»-ը: Անհրաժեշտ է միայն յերբեք չը մոռանալ դպրոցական ինքնավարության հիմնական նպատակադրումը, այն է՝ դպրոցականների հասարակական պրակտիկան, հասարակական ունակությունների մշակումը և այլն. այն ժամանակ երբ բոլորովին հասկանալի և պարզ կը լինի, վոր առաջին աստիճանի դպրոցում, բացի «ժողկոմխորհներից» և «գործկոմիներից» կարելի է նաև գտնել հարմար ձևեր:

Տևողական փորձի հաշվառումը ցույց է տալիս, վոր ստորին խմբակներում զանազան նպատակակիր կոմիտեների գոյությունը նպատակահարմար է (այդ կոմիտեներից շատերի համար անհրաժեշտ չե, վոր տեական լինեն). իսկ բարձր խմբերում՝ գասկոմներ: Համագործակցական մասշտաբով գասկոմները, ֆորպոստի հետ միասին, կազմում են աշկում: Աշկումը ֆորպոստի և ուսուցչի աշակցությամբ ղեկավարում է առաջին աստիճանի դպրոցի հասարակական կյանքը, կանոնավորում է հասարակական կազմակերպությունների գործունեությունը, ձևակերպում է հասարակական նշանակություն ունեցող արտադպրոցական ձեռնարկություններն և այլն: Գործն այսպես կազմակերպելով, աշկոմն հնարավորություն է ունենում իր գործունեության մեջ աշխատանքի բաժանում կատարել, իսկ ինչ մնում է ֆորպոստին, նա իրան է վերապահում դպրոցականների ամբողջ հասարակա-քաղաքական գործի ղեկավարությունը:

Այս ձևի կազմակերպությունը գուցե կը կարողանա զգուշացնել մի շարք այնպիսի ողակներից և կոմիտեներից, վորոնք կենսական պահանջ չեն ներկայացնում և մյուս կողմից կը նպաստեն յերեսաների հասարակական ենեղիլայի խելացի և արդյունավետ ոգտագործմանը: Բայց այս ձևի ինքնակազմակերպությունը նպատակահարմար է շատ խմբակներ ունեցող դպրոցներում: Իսկ միակողմալիկ դպրոցներում, վորտեղ մի ուսուցչիչը պարապում է մի քանի խմբակների հետ և միաժամանակ, դպրոցական ինքնավարությունը պիտի լինի շատ տարրականացրած:

Ս. Բելոուսովը իր անձնական և ուրիշների փորձից յեխելով, միանգամայն ճիշտ կերպով հաստատում է. «Միակողմալիկ դպրոցներում ավելի նպատակահարմար է ունենալ մի ընդհանուր գասկոմ, վոր միաժամանակ կը կատարի բազմակողմալիկ դպրոցների աշկոմի դերը: Նրա, այդ գասկոմի մեջ, պիտի լինեն բոլոր խմբակների ներկայացուցիչները»:

10. Հասարակա-քաղաքական դասխարակությունը յել հասարակագիտությունը առաջին աստիճանի դպրոցում.

Դպրոցական հասարակագիտությունը, վոր չի վերցվում միայն վորպես ուսումնական առարկա, շատ հաջող կերպով կը նպաստի խորհրդային պետության պիտանի մարդ դաստիարակելու գործին, յեթե աշակերտների ուսումնական աշխատանքն որդանապես կապված է նրանց հասարակական գործունեության հետ: Ահա թե ինչու անհրաժեշտ է, հասարակագիտական աշխատանքը պլանավորելիս, մտցնել պլանի մեջ նաև հասարակական առաջադրություններ: Այդ զեպում աշակերտներին առաջ դրված կը լինի աշխատանքի մի միասնական պլան՝ ուսումնական և հասարակա-քաղաքական բնույթով: Աշակերտների մասնակցությունն հասարակական կազմակերպությունների մեջ իհարկե չի կրում ուսումնական բնույթ, բայց հասարակագիտական դասերի ընթացքում կարելի յե հաշվի առնել տեսական այն պատրաստությունը, վոր անհրաժեշտ է աշակերտների հասարակական աշխատանքի համար:

Առանց հասարակագիտական գիտելիքների հաճախ դժվարանում է հասարակական աշխատանքը: Այդ իսկ պատճառով ծրագրային ուսումնական

54
աշխատանքը որդանապես պիտի կապված լինի հասարակա-քաղաքական
դաստիարակության ընդհանուր խնդիրների հետ: Այլ կերպ ասած՝ հասա-
րակագիտությունն ամբողջապես հագեցրած պիտի լինի հասարակա-քաղաքական
ներգործական բովանդակությամբ: Յեթե ուսուցիչն այդպես վարվի, այն ժա-
մանակ նրա համար ավելի հեշտ կը լինի ճշտորեն կազմել առաջին աստի-
ճանի դպրոցի հասարակագիտության աշխատանքների պլանը:

Ca $\frac{M}{429}$



ՀՀ Ազգային գրադարան



NL0191523

